ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1, հեռ. +(374 11) 514-240

№ Հ/ 340 27.11.2019թ.

«Ինֆորմացիայի ազատության Կենտրոն»
ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան,

ի պատասխան Ձեր գրավոր հարցման՝ տեղեկացնում ենք, որ համաձայն Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի և քաղաքաշինության և ճարտարապետության վարչության կողմից տրամադրված տեղեկատվությունների՝ նախկինում «Երևան քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների կոմպլեքսային պահպանման և օգտագործման» նախագծով (Երքաղխորհրդի գործկոմի կողմից հաստատված 17.04.1991թ. հ.6/18 որոշմամբ) մոտ 750 հա մակերես կազմող սահմաններով առանձնացված է եղել «Դալմայի այգիներ-Սարդարի այգի» գոտի, սակայն սահմանները փոփոխվել են, քանի որ հետագայում այդ որոշումը (նաև նախագիծը) Երևանի քաղաքապետի 2002թ. օգոստոսի 30-ի հ.1137 որոշմամբ ճանաչվել է ուժը կորցրած:

Վերը նշված հողամասը ՀՀ կառավարության 09.03.1994թ. հ.108 որոշման հիմքով, Շահումյանի շրջխորհրդի գործկոմի հետ կնքված օրինակելի պայմանագրերով, գյուղատնտեսական նշանակությամբ տնօրինելու պայմանով մասնատվել է:

ՀՀ կառավարության 2003թ. մարտի 27-ի «Երևանի Դալմայի այգիների պահպանման ենթակա հողերի սահմանների և նպատակային նշանակության փոփոխության մասին» հ.1941-Ա որոշման հիման վրա Դալմայի այգիների սահմանները ամրագրվել են 256 հա մակերեսով և տեղայնացվել է Երևանի քաղաքապետի 2004 թվականի մայիսի 25-ի հ.918-Ա որոշմամբ ու թողարկվել է 2007թ. սեպտեմբերի 28-ի հ.4103-2007թ. գլխավոր հատակագիծը: Ներկայումս Դալմայի այգիների ընդհանուր

զբաղեցրած հողատարածքի մակերեսը կազմում է 228.34հա, որը հանդիսանում է «Հայանտառ» տնտեսության հող:

ՀՀ կառավարության 2018 թվականի հունվարի 11-ի «Ներդրումային ծրագրին հավանություն տալու «Պարկ Գրուպ» ՍՊԸ-ն առանց մրցույթի հողամաս տրամադրելու մասին» հ.5-Ա որոշմամբ, հավանություն է տրվել ընկերության կողմից ներկայացված մանկական, երիտասարդական, ընտանեկան հանգստի և ժամանցի կենտրոն ստեղծելու ներդրումային ծրագրին և առաջարկվել է Երևանի քաղաքապետին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Մոնթե Մելքոնյան փողոցին հարակից տարածքում գտնվող 27.66հա պետական սեփականություն հանդիսացող անտառային ֆոնդի հողերի նպատակային նշանակությունը փոխել հատուկ պահպանվող տարածքների հողերի նպատակային նշանակության (Երևանի ավագանու 13.01.2018թ. հ.119-Ա «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» որոշում, Երևանի քաղաքապետի որոշումներ 12.02.2018թ. հ. 418-Ա, 14.02.2018թ. հ. 470-Ա):

Ծիծեռնակաբերդի խճուղուն հարող տարածքում կառուցապատման թույտվություններ են տրամադրվել, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2005թ. դեկտեմբերի 15-ի հ. 2330-Ն որոշմամբ հաստատված «Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը /2005-2020թթ/: Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը անցել է անհրաժեշտ համալիր փորձաքննություն, այդ թվում նաև բնապահպանական: Գոտում առկա են հնագիտական ռեսուրսներ, հինգ-հազարամյա գործող ջրանցք, խաղողագործության նախկին վայրեր և այլն :